**Արձանագրություն N 2**

***2026 թվականի Առողջապահության նախարարության կարիքների համար արյան մեջ գլյուկոզայի որոշման թեստ-հավաքածուների ձեռք բերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/9» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի***

ք. Երևան «15» «Հոկտեմբերի» 2025թ.
ժամը 17:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ Հ. Մնացականյան

Հանձնաժողովի անդամներ Մ. Հարությունյան, Ն. Դանիելյան

Հանձնաժողովի քարտուղար Ա. Գալուստյան

***1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին***

---

***(Հ. Մնացականյան)***

Ընդունել ի գիտություն, որ 15.08.25թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային աճուրդ համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2025 թվականի սեպտեմբերի 8-ին, ժամը 11:00-ին, իսկ հակադարձ աճուրդի մեկնարկը՝ 2025 թվականի սեպտեմբերի 9-ին ժամը 11:00-ին: 2025 թվականի սեպտեմբերի 10-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու նպատակով:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Կազմակերպության էլ. հասցե | Կազմակերպության ՀՎՀՀ |
|---|---|---|---|
| 1 | «ԱԷՄՋԻ» ՍՊԸ | amg.llc@list.ru | 02863111 |
| 2 | «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ | lawyer@c-e.am | 01210095 |
| 3 | «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ | tender@theopharma.am | 00471216 |

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

***2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին***

---

***(Հ. Մնացականյան)***

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/9» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի հիվանդության և անաշխատունակության մեջ գտնվելու պատճառով հայտերի գնահատումը կասեցվել է և 19.09.2025թ. Առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարի թիվ 5706-Ա հրամանով իրականացվել է նշված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կազմի փոփոխություն և սահմանվել է նոր կազմ, անփոփոխ թողնելով գնահատող հանձնաժողովի նախագահի և անդամների թեկնածությունները, փոփոխելով քարտուղարին՝ Հասմիկ Սարգսյանի փոխարեն սահմանելով քարտուղար Արմինե Գալուստյանին:

Առաջին տեղը զբաղեցրած մասնակից՝ «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:***

***3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին***

---

***(Հ. Մնացականյան)***

Առաջին տեղը զբաղեցրած մասնակից՝ «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, սակայն ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան, մասնավորապես հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան (կցվում է)՝ մասնավորապես երաշխիքի 5-րդ կետում նշված է «Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է մինչև բենեֆիցիարի կողմից ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/9 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով պրինցիպալի կողմից հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված իննսուներրորդ աշխատանքային օրը ներառյալ, սակայն ոչ ուշ քան 02.02.2026թ.-ը ներառյալ:», իսկ հրավերի պահանջով ՝ «Իսկ եթե սույն ընթացակարգը կազմակերպվում է «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա և գնման հայտով սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գինը գերազանցում է 25 մլն. ՀՀ դրամը, ապա հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված 120 (մեկ հարյուր քսան) աշխատանքային օր:», իսկ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/9» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարված է «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա: Հայտի ապահովման ներկայացումը հրավերի պահանջներին անհամապատասխան շտկման ենթակա անճշտություն չէ, ուստի «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ի հայտը որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակից (էլեկտրոնային աճուրդ համակարգով) ենթակա է մերժման՝ հիմք ընդունելով 04.05.2017թ. ՀՀ Կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը, կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Առաջին տեղը զբաղեցրած մասնակից «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ի հայտում հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ուստի վերջինիս հայտը ենթակա է մերժման:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

### 4. Մասնակիցների առաջարկաց գների մասին

---

***(Հ. Մնացականյան)***

Մասնակցի կողմից ներկայացված վերջնական գները 09.09.2025թ.-ին կայացած հակադարձ աճուրդից հետո ներկայացվում են կից ֆայլով:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

### 5. Հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

---

***(Հ. Մնացականյան)***

Հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ներկայացվել:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

### 6. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներ որոշելու մասին

---

***(Հ. Մնացականյան)***

**Որոշվեց.** «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/9» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից « ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

***7. Ընթացակարգի ամփոփման մասին***

------------------------------------------------------------------------------------------------

***(Հ. Մնացականյան)***

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն և ՀՀ Կառավարության 04.05.2017թ. ՀՀ Կառավարության թիվ 526-Ն որոշումների պահանջները և մասնակիցների կողմից ներկայացված հայտերը՝

**Որոշվեց**. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/9» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած՝ **հ**իմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը:

*1.* Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը՝ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/9» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ սահմանել 17.10.2025թ.-ից մինչև 26.10.2025թ.-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

Հանձնաժողովի

Նախագահ՝ ------------------- Հ. Մնացականյան

Անդամներ՝ ------------------- Մ. Հարությունյան

------------------- Ն. Դանիելյան

Քարտուղար՝ ------------------- Ա. Գալուստյան

**CONVERSE BANK**

**TRUSTED BY GENERATIONS**

«02» 09 2025

№ CCK/2137

Հավելված 2
«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/9»՝ ծածկագրով
էլեկտրոնային աճուրդի հրավերի

**ԵՐԱՇԽԻՔ N CCK/2137**

1. Սույն երաշխիքը, ինչպես նաև սույն երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում են ՀՀ առողջապահության նախարարության (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից թիվ ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/9 ծածկագրով «ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՐՅԱՆ ՄԵՋ ԳԼՅՈՒԿՈԶԱՅԻ ՈՐՈՇՄԱՆ ԹԵՍՏ ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻՆ» «ԱԵՄՋԻ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) մասնակցելուց բխող՝ նույն ծածկագրով հրավերով սահմանված պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 5.038.000 .00(հինգ միլիոն երեսունութ հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000466 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է մինչև բենեֆիցիարի կողմից թիվ ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/9 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով պրինցիպալի կողմից հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված **իննսուներորդ** աշխատանքային օրը ներառյալ, սակայն ոչ ուշ քան 02/02/2026թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի տրամադրման փաստի վերաբերյալ տեղեկատվությունը՝ երաշխիքի համարը, տրամադրող բանկի անվանումը և սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագիրը՝ առանց գումարի չափի մասին նշման, երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է սույն կետում նշված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ hsargsyan@moh.am էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում է հայտը մերժելու մասին գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը և երաշխիքը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

*Իրավասու անձ*

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ, 00000291
Վարկային գործառնությունների համար

Իրավասու անձ
Authorized person
Աննա Առաքելյան
Anna Arakelyan
ստորագրություն / signature

For Credit Operation
"CONVERSE BANK" CJSC, 00000291
26/1 V. SARGSYAN str., YEREVAN

*Պատասխանատու՝ Նարինե Ղալումյան/Ներքին հեռախոսահամար՝ 2225*

2026 թվականի կարիքների համար ձեռք բերվելիք արյան մեջ գլյուկոզայի որոշման թեստ երիզների վերաբերյալ վերջնական գներով 09.09.25թ. կայացած հակադարձ աճուրդից հետո

| NN | Դեղի անվանումը | Քանակ | Նախահաշվային | | «ԱԷՄՋԻ» ՍՊԸ հայտը մերժվել է հայտի ապահովման սխալ ներկայացման հիմքով | | | | | «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ | | | | | «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Վերջնական առաջարկ | | | | | Վերջնական առաջարկ | | | | | Վերջնական առաջարկ | | | | |
| | | | Միավորի գին | Գումար | Արժեք | ԱԱՀ | Գումար | Միավորի գին առանց ԱԱՀ-ով | Միավորի գին ԱԱՀ-ով | Արժեք | ԱԱՀ | Գումար | Միավորի գին առանց ԱԱՀ-ով | Միավորի գին ԱԱՀ-ով | Արժեք | ԱԱՀ | Գումար | Միավորի գին առանց ԱԱՀ-ով | Միավորի գին ԱԱՀ-ով |
| 1 | արյան մեջ գլյուկոզայի որոշման թեստ երիզներ | 3,200,000 | 31.17 | 99,744,000 | 75,639,200 | 15,127,840 | 90,767,040 | 23.64 | 28.36 | 76,470,400 | 15,294,080 | 91,764,480 | 23.90 | 28.68 | 83,120,830.00 | 16,624,166.00 | 99,744,996 | 25.98 | 31.17 |